

ԸԶԳԱԾԱԿ ՄԵՐԴԻԸ (ԱԲՈՎԵԾՆԵ) ԻՐ ՄԱՀՈՒՄՆ ՎԱԼԽԸ¹⁾

Մնաք բարով մնաք մնցկացած օրեր

Մոռացիր Աշխարհ քեզ տուած ցաւեր.

Մարդիկ ընտանիք հւր էք դուք լալիս

Մարմինս թէ փթի, սիրէ ձեզ հոգիս:

Էս ճամփէն մէկ օր պէտք է մինք գնանք,

Մահով էն կեանքին համնենք, դինչանանք

Քայց մեռնել որ ես շուտ ուզում չէի,

Յետ կըգամ աղգիս, ալս ասում էի:

Քայց հւր իմ մուրազի որ սիրտս էրամ էր,

Տանջում, ինձ մաշում ալս ցերեկ գիշեր.

1) Մենք ձեռք բերինք մի փոքր գրչագիր տեար, որի մէջ գրուած են մի քանի գրաբար ոտանաւորներ, որոնց սկզբանաւում են Անբէլ բառը: Այդ տեարի վերջը գտանք երկու աշխարհաբար ոտանաւոր միենայն գրչութեամբ գրուած այս վերնագրերով. «Աղգասէր մարդը» (Աբովեանն) իր մաշուան վախտը» և «Առ մայրն իւր». Երկու ոտանաւորների լեզուն ու ոճն ևս անկասկած նաշատուր Աբովեանինն է, իսկ «Անբէլ» կարծում ենք Աբէլարբեպիսկոպոս Միհթարեանն է, որ իւր բանաստեղծութեանց տետրում արտագրել է նաև Աբովեանի յիշեալ երկու ոտանաւորները, «Աղգասէր մարդը» բառերից յետոյ փակագնում աւելացնելով «Աբովեանն» բառը: Մենք այդ ոտանաւորները նոյնութեամբ հրատարակում ենք ներկայ գրքում յապաւելով առաջինից միայն 4 տող:

Խմբ.

Թէ իմ աշխարհքիս ջանս դուրբան տայի,
 Բա հողի տակին նվ պէտք է փթի:
 Աշխարհքիս փառքն՝ նշ են մեծութիւն.
 Ես չեմ ափսոսում, որ մնացի մաղրուն.
 Բայց Բնշպէս փակեմ աշքս ու ալս չքաշեմ.
 Որ հազար մտքեր հողն պէտք է տանեմ:
 Ոչ երկար ապրելն էր իմ ուզածը
 Ո՛չ լաւ օր քաշելն՝ ալս իմ խնդրուածը.
 Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աշքիս
 Երբ չէի կարում պէտքը գալ ազգիս:
 Էկէք հողիս վրայ հոգիս յիշեցէք
 Իմ աղիղ որդեակներ ձեր խեղճ հօրը ողորմի տուէք-
 Լեզուս որ լոռի, իս հողս ձեղ կասի,
 Թէ երկնքումը էս ինձ կտանջին
 Փակիր աշխարհքը սև իմ քաշած օրեր,
 Որ ձեռա չի հասաւ սրտիս ուզածն անել.
 Արարիշ իմ տէր թէ մարդ չի իմանայ
 Իմ աղօթքն էս էր, բեղ լաւ յայտնիայ:
 Մարդիկ ախ մարդիկ, դուք երբ կզարթնիք.
 Որ սիրտ սրտի տանք, միմեանց քոմակ ըլնինք.
 Իմանաք մեր դրախտումն կեանքը հէնց էն ա,
 Ով որ խեղճ աղգի ցաւը կիմանայ:
